ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

28 սեպտեմբերի 2011 թվականի N 129-Ա

ք. Հրազդան

Ա. ՎԵՐԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Արթուր Վերանյանին*** տրամադրել 2011 թվականի իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2011 թվականի հոկտեմբերի 24-ից մինչև 2011 թվականի նոյեմբերի 18-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

Հիմք՝ ***Ա. Վերանյանի*** անձնական դիմումը:

2. ***Արթուր Վերանյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել ընկերության բուժական գծով տնօրենի տեղակալ ***Արմեն Նազարյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ